



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎՈՒՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական Յ-րդ. շուք
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
ՊՍԸ, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Կախում/Е-mail: թ. 10414 min_ecobzv@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
☎ (374 11) 818 506

№ _____

<< >> _____ 2015թ.

Ստեփանավանի բնապահպանական տեղեկատվական
հասարակական <<Օրիոս>> կենտրոնի համակարգող
տիկին Մ.Մելիքջանյանին


Հարգելի տիկին Մելիքջանյան

Ի պատասխան Ձեր 2015թ. մարտի 22-ի գրության, հայտնում եմ, որ <<Գրեյդ Ռեդմետ>> ՍՊԸ կողմից 02.07.2014թ. շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրի արդյունահանման նախագիծը (ինչպես նաև նախագծի բնապահպանական մասը՝ ՇՄԱԳ -ը):

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի՝ <<Փորձաքննական եզրակացությունը ձեռնարկողին է տրվում փաստաթղթերը ստանալուց առնվազն 120-օրյա ժամկետում, եթե 9 և 14 հոդվածների համաձայն այլ ժամկետ չի նախատեսվում>>:

Սակայն ըստ նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի՝ <<Մասնագիտական եզրակացության մշակման ընթացքում հասարակական, ազդակիր համայնքի և համապատասխան պետական մարմինների կարծիքները հաշվի առնելու>> պահանջի կատարման հիմնավորումով փորձաքննական գործընթացը երկարացվել է՝ նախագծային փաստաթղթերում համապատասխան լրամշակումներ և հիմնավորումներ ներկայացնելու պայմանով:

Բարձրացված խնդիրներին հնարավոր նախագծային լուծումներ տալու և փորձաքննության գործընթացի ժամկետները չխախտելու նպատակով, ձեռնարկողը 22.12.2014թ. դիմել է փորձաքննական գործընթացը ժամանակավորապես դադարեցնելու և համապատասխան լրամշակված նախագծային փաստաթղթերը ներկայացնելուց հետո կրկին վերսկսելու խնդրանքով:



Ներկայում փորձաքննական գործընթացը դադարեցված է և կվերսկսվի համապատասխան լրամշակված նախագծային փաստաթղթերը <<Ճրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ ներկայացնելուց հետո:

Կից ներկայացվում է շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքները:

Առդիր՝ 13 թերթ:

Հարգանքով՝
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ



Խ. Աղաբեկյան

Ա.Վարդանյան
011-818-517



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N..... "....." -----2015 թ.

ՀՀ բնապահպանության նախարար
պրն Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թ. փետրվարի 20-ի N 02/26.3/2432-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովոյի գյուղական համայնքի տարածքում գտնվող ոսկու հանքավայրի բաց եղանակով շահագործումը և շահագործման ձևը սպառնում են ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված հանրապետական նշանակության Ք.ա. 4-3-րդ հազ. «Ամրոց-բնակատեղի» պատմամշակութային հուշարձանի (պետ. ցուցիչ 5.113.1) գոյությանը և կարող են հուշարձանի ոչնչացման պատճառ դառնալ:

Նկատի ունենալով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջը, այն է՝ «հուշարձանների քանդումն արգելվում է», նախարարությունը հնարավոր չի գտնում հանքավայրի շահագործումը:

Հարգանքով՝

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՊՍՀՊ գործակալություն
Կատ.՝ Ա. Շաքարյան
Հեռ.՝ 011.56.51.18



**Հ Ա Յ Ա Մ Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ Ա Ն Ե Վ Մ Ե Ա Կ ՈՒ Թ Թ Ի Հ ՈՒ Ե Ա Ր Զ Ա Ն Ն Ե Ր Ի
Պ Ա Հ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Գ ՈՐ Ծ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ Ա Ն Լ ՈՈ ՈՒ Ե Վ
Տ Ա Վ ՈՒ Ե Ի Տ Ա Ր Ա Ծ Ե Ա Յ Ի Ն Բ Ա Տ Ի Ն**

ք.Վանաձոր

հեռ. 077-160-770

«03» 03 2015թ.

**ԴԴ հուշարձանների պահպանության
գործակալության պետ
պարոն Ա. Արրոյանին**

Տեղագնման եզրակացություն

Ձեր հանձնարարությամբ ևս մեկ անգամ իրականացրել եմ տեղագնություն Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական սահմաններում գտնվող ոսկու հանքավայրի տարածքում, ներգրավելով պատմական միջավայրի պահպանության ծառայության մասնագետների և Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մասնագետներին: Տեղագնության արդյունքում և Ձեր տված տվյալների /կոորդինատներ, քարտեզներ/ ու Ֆիոլետովո համայնքի հողերի ժամանակավոր սխեմայի համադրման արդյունքում, ինչպես նաև մեր ունեցած բոլոր փաստական տվյալների համադրման արդյունքում պարզել եմ, որ հանքավայրի ենթադրվող շահագործվելիք տարածքը /ըստ Ձեր տրված կոորդինատների/ իր հիմնական մասով համընկնում հնավայրի պահպանական գոտու տարածքի հետ: Ուսումնասիրության և վերլուծության արդյունքում եկանք հետևյալ եզրակացության.

1. հանքավայրի շահագործման դեպքում խաթարվելու է Ք.ա. 4-3 հազարամյակին թվագրվող ամրոց բնակատեղիի /պետ.ցուց. 5.113.1 / պահպանական գոտին և պատմական միջավայրը
2. առավել ևս խաթարվելու են բնական լանդշաֆտի և կառուցապատման կարգավորման գոտիները, քանի որ հանքավայրի և նրա շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը անհարիր է տվյալ հուշարձանին
3. հասկանալի է, որ ցանկացած հանքավայրի առավել ևս մետաղական հանքավայրերի շահագործումը ենթադրում է շարունակականություն և նոր տարածքների ընդգրկում
4. հանքավայրի շահագործման ավարտից հետո լքված փոսորակները կարող են դառնալ հնավայրի փլուզման պատճառ

Հուշարձանի և պատմական միջավայրի պահպանության տեսակետից Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրի շահագործման հնարավորությունը միանշանակ հակասում է Հայաստանի Հանրապետության «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքին:

Այնուհանդերձ, եթե հանքավայրի հնարավոր շահագործողները գտնում են, որ հանքավայրը հնարավոր է շահագործել առանց խաթարելու հուշարձանի պահպանական գոտին, բնական լանդշաֆտի և կառուցապատման և կարգավորման գոտիներն ու պատմական միջավայրը և կապացուցեն, որ դեպի հուշարձանի տարածք հանքավայրի ընդարձակման հնարավորությունները բացառվում են, ապա իմ կարծիքով կարող են առաջարկել ՀՀ կառավարությանը կազմելու մասնագիտական հանձնաժողով որտեղ կներառվեն հնագետներ, մշակույթի նախարարության ներկայացուցիչներ, երկրաբաններ, լեռնային ինժեներներ և այլն, որը կքննարկի նման հնարավորությունները և լուծումներ կգտնի թվարկված խնդիրների համար:

Հուշարձանների պահպանության գործակալության

Լոռու և Տավուշի տարածքային բաժնի

գլխավոր մասնագետ

Հրայր Խեչիկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեր N _____

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար

ՀՀ առողջապահության նախարարությունում քննարկվել է Ձեր 2014 թվականի հունվարի 22-ի N 1/33/10066-15 գրությունը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված «ՀՀ Լոռու մարզի Ֆիզլետովոյի ոսկու հանքավայրի արդյունահանման» աշխատանքային նախագծին կարծիք ներկայացնելու մասին, որի վերաբերյալ հայտնում եմ.

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված ՀՀ Լոռու մարզի Ֆիզլետովոյի ոսկու հանքավայրի արդյունահանման աշխատանքային նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 47-րդ էջում (8.2.2. կետ) և 73-րդ էջում (13.2. կետ) նշվում է, որ նախագծային լուծումներով կենցաղային կեղտաջրերը քետոնե լցարանից տեղափոխելու են մոտակա մաքրման (կենսաբանական) կայան և կեղտաջրերի արտահոսքը բաց ջրային ավազաններ բացառվում է, սակայն Լոռու մարզում կեղտաջրերի մաքրման գործող կայաններ չկան, ինչից ելնելով առաջարկվում է նախատեսել կեղտաջրերի մաքրման լոկալ կառույցներ:

2. Նախագծի 48-րդ էջի 5-րդ պարբերությունում (9-րդ գլուխ) նշվում է, որ բանեցված դողաձածկարանների շփումը անձրևաջրերի հետ կարող են աղտոտել շրջակա միջավայրը տորքսիկ օրգանական նյութերով՝ առաջարկվում է նախատեսել, որ վերջիններիս կուտակման վայրը լինի փակ շինություն՝ մթնոլորտային տեղումներից գերծ պահելու համար:

3. Նախագծի 52 և 53-րդ էջերում (10.1 կետ) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է, որ հանքում աշխատող տեխնիկան և ավտոինքնաթափ մեքենաները ունենան կատալիտիկ չեզոքացուցիչներ: Ավելին՝ մթնոլորտային օդի արտանետումների հաշվարկները (էջ 56՝ աղյուսակ 11.3, էջ 57՝ աղյուսակ 11.3, 12.5 կետ) ևս կատարված են կատալիտիկ չեզոքացուցիչներ ունեցող տեխնիկայի և ավտոինքնաթափ մեքենաների համար: Անհրաժեշտ է նշել այն օրենսդրական հիմքերը, որոնց համաձայն տնտեսվարողի կողմից հանքում կատալիտիկ չեզոքացուցիչներ ունեցող տեխնիկայի և ավտոինքնաթափ մեքենաների օգտագործումը պարտադիր է: Նման հիմքերի բացակայության դեպքում հաշվարկը անհրաժեշտ է կատարել սովորական, առանց կատալիտիկ չեզոքացուցիչների տեխնիկայի և ավտոինքնաթափ մեքենաների օգտագործման համար:

4. Նույն կետերում նախատեսվում է, որ հորատումը կատարվի «թաց» եղանակով, պայթեցման, հորատման, բեռնման և այլ աշխատանքները ուղեկցվեն անըդիատ ջրցանմամբ՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով, ինչից ելնելով օդի արտանետումների հաշվարկները կատարված են հաշվի առնելով, որ փոշու քանակությունը ջրցանման արդյունքում նվազում է: Սակայն ներկայացված չէ հանքավայրի կառուցման նախագիծը՝ իր տեխնոլոգիական լուծումներով և ջրցանման հետ կապված տեխնոլոգիայի նկարագրությամբ:

5. Հանքափոշու բաղադրությունը որոշված չէ, պարզ չէ, թե արդյոք կան ծանր մետաղներ, վնասակար քիմիական միացություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ աշխատողների և բնակչության առողջության վրա: Միաժամանակ տարբեր բաղադրության փոշու տեսակների համար սահմանված են տարբեր ՍԹԿ-ներ:

6. Նախագծի 56-րդ էջում բերված աղյուսակ 11.2-ում անհասկանալի է՝ «փոշու արտանետումների քանակը» աղյուսակի առաջին 3 տողերի համար ինչ ժամանակահատվածի համար է նախատեսված:

7. Նույն աղյուսակում նշված չէ պայթեցման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների քանակը: Ավելին՝ էջ 60-ում (գլուխ 12. Բացահանքի շահագործման ժամանակ ազդեցությունը մթնոլորտային օդի վրա) նշվում է, որ

փոշու և գազերի էմիսիայի տևողությունը պայթեցման աշխատանքների ժամանակ կազմում է 10-15 րոպե, այդ պատճառով այն համարվում է զարկային և մթնոլորտի աղտոտման մակարդակի հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Առաջարկվում է նշել, ինչպես օրական, այնպես էլ տարեկան պայթեցումների քանակը և հաշվարկել արտանետվող փոշու և գազերի միանվագ, միջին օրական և տարեկան արտանետումները: Ելնելով ստացված տվյալներից բնակելի գոտու հաշվարկներում անհրաժեշտ է ավելացնել նշված արտանետումներից սպասվող օդի աղտոտման մակարդակները և դրա հնարավոր ազդեցությունը հարակից համայնքների բնակչության առողջության վրա:

8. Նախագծի 57-րդ էջի աղյուսակ 11.3-ի 3-րդ և 4-րդ սյունակների վերնագրերը և համապատասխանաբար սյունակներում բերված մեծությունները անհասկանալի են՝ մասնավորապես 3-րդ սյունակը նախատեսված է «ՍԹԿ մ.մ. բնակելի գոտու համար, մգ/մ³», 4-րդ սյունակի (Վնասակար նյութերի սպասվելիք կոնցենտրացիաները) 2 ենթասյունակներից մեկում նշվում է «մգ/մ³», մյուսում՝ «ՍԹԿ մ.մ. բնակելի գոտու համար»: Համապատասխանաբար 3-րդ սյունակում ազոտի օքսիդների նորմը նշվում է 0.085 մգ/մ³, իսկ բնակելի գոտում սպասվելիք ՍԹԿ մ.մ.-ի համար 4-րդ սյունակի ենթասյունակներում բերված են 2 մեծություններ՝ 0.05 և 0.8: Ելնելով նշվածից՝ անհրաժեշտ է աղյուսակը հստակեցնել:

9. Նախագծի 57-րդ էջում (կետ 12.1) նշվում է, որ մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման համար որպես ելակետային տվյալ օգտագործել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ ձեռնարկության նախագիծը, սակայն վերջինս ներկայացված չէ: Ներկայացված չէ նաև սահմանված կարգով ՀՀ կադաստրի կողմից հաստատված բացահանքի գլխավոր և իրավիճակային հատակագիծը: Միաժամանակ առաջարկվում է իրավիճակային (սիտուացիոն) պլանում նշել հարակից 3 բնակավայրերի խմելու ջրաղբյուրների կառույցները՝ ՀՀ առողջապահության նախարարի 29.11.02թ. N 803 հրամանով հաստատված «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N 2-III-Ա2-2 սանիտարական նորմերի և կանոններով սահմանված սանիտարական պահպանման գոտիներով, ինչպես նաև հանքային ջրերի աղբյուրները՝ իրենց սանիտարական պահպանման

գոտիներով: Անհրաժեշտ է հիմնավորել, որ հանքարդյունաբերությունը բացասաբար չի անդրադառնա խմելու և հանքային ջրերի որակի վրա:

10. Նախագծում առկա են անճշտություններ՝ էջ 80-ում նշվում է, որ Ֆիզիկոսովո գյուղը գտնվում է 420 մ. հեռավորության վրա, իսկ էջ 5-ում՝ 500 մ., էջ 10-ում՝ 1.5 կմ, էջ 37-ում՝ 2.7 կմ հեռավորության վրա: Նշվածը անհրաժեշտ է հստակեցնել, այդ թվում՝ ներկայացնելով իրավիճակային հատակագիծը:

11. Նախագծի 58-րդ էջում (կետ 12.4) նշվում է, որ մթնոլորտի աղտոտման ֆոնային կոնցենտրացիաների արժեքները վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության մոնիտորինգի կենտրոնի կայքէջից, սակայն այն անհրաժեշտ է վերցնել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և հայաստանի հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1673-Ն որոշումից:

12. Նախագծի 69-րդ էջում՝ (աղյուսակ 12.12. վնասակար նյութերի որակական և քանակական բաղադրությունն ըստ աղբյուրների) որպես արտանետման աղբյուրներ նշվում են անկազմակերպ 2 աղբյուր՝ բացահանքը (հորատում, հանքաքարի և դատարկ ապարների բեռնում, տեղափոխում ավտոինքնաթափերով, հանքաքարի բաց պահեստ) և լցակույտ (ավտո-տրանսպորտով մակաբացման ապարների տեղափոխում լցակույտ, դատարկ ապարների բեռնաթափում, լցակույտաառաջացում, լցակույտի մակերեսից փոշեգոյացում), սակայն նշված արտանետումների աղբյուրների համար 3-րդ սյունակում՝ որպես «արտանետումների բարձրությունը հողի մակերեսից» նշվում է 2 մ., իսկ 4-րդ սյունակում՝ որպես «արտանետման խողովակի ելանցքի տրամագիծ» նշվում է համապատասխանաբար 100մ. և 50 մ., ինչը անհրաժեշտ է հստակեցնել:

13. Նախագծի 12.5-րդ կետի 12.13-րդ աղյուսակում ածխաջրածինների սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ խտությունը սահմանված է 1,5 մգ/մ³ ՀՀ կառավարության «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ),

նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշմամբ սահմանված 1 մգ/մ^3 -ի փոխարեն:

14. Բոլոր հաշվարկների աղյուսակներում բանաձևը սյունակում նշված «մեթոդակարգ» բառը անհրաժեշտ է հստակեցնել, նշելով օգտագործված մեթոդաբանության օրենսդրական հիմքերը:

15. Նախագծի 72-րդ էջում՝ «սանիտարապաշտպանիչ գոտին» չի համապատասխանում «ՍՆ 245»-ում բերված նորմերին, նշված է 300 մ.՝ 500 մ.-ի փոխարեն:

16. Նույն էջի աղյուսակ 12.15-ում նշվում է միայն փոշու և ազոտի երկօքսիդի մերձգետնյա կոնցենտրացիաները: Անհրաժեշտ է ընդգրկել նաև աղյուսակ 12.13-ում նշվող մյուս աղտոտող նյութերը՝ ածխածնի օքսիդը, ածխաջրածինները, մուրը:

17. Նորմատիվ հղումների զգալի մասը (էջ 55, 73, 79, 107, 114 և այլն) լիարժեք չեն բերված (օրինակ՝ նշված չեն ՀՀ կառավարության որոշման համարը և ճիշտ անվանումը, օգտագործված գրականության հեղինակների անունները և այլն), անհրաժեշտ է լրամշակել:

18. Նախագծի էջ 73-ում նշվում է, որ խմելու-տնտեսական նպատակներով ջուրը բերվելու է Ֆիոլետովո գյուղից՝ «կցովի ցիստեռն BD-1,2»-ով, ինչը ընդունելի չէ: Խմելու-տնտեսական նպատակներով պետք է օգտագործվի ջրամատակարարման կենտրոնացված համակարգով կամ տեղային աղբյուրից տրվող ջուր, որը պետք է համապատասխանի «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N 2-III-Ա2-2 սանիտարական նորմերի և կանոններին, ինչից ելնելով առաջարկվում է նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ:

19. Նախագծի էջ 74-ում (կետ 13.3.1) նշված կառույցների ցանկում բացակայում են աշխատակիցների ջեռուցվող սան.կենցաղուկները՝ ցնցուղարաններով, սան.հանգույցներով, հանգստի և սննդի ընդունման կառույցները, ինչը անհրաժեշտ է ավելացնել:

20. Նախագծի էջ 79-ում առաջարկվում է նշել հերթափոխում խմելու ջրի պահանջարկի համար բերված (10լ) նորմատիվ հիմքերը: Ջրապահանջի և առաջացած կեղտաջրերի հաշվարկում առաջարկվում է ներառել ցնցուղարանների,

սննդի ընդունման հատվածի ջրամատակարարման ծավալները: Կետի առաջին պարբերությունում նշվող «СНП»-ը ՀՀ-ում չի գործում: Անհրաժեշտ է հիմք ընդունել «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը:

21. Նախագծի էջ 80-ում (կետ 14) աղմուկի մակարդակի հաշվարկների որպես նորմատիվ հիմք նշվում է СНП-12-77-ը, մինչդեռ ՀՀ-ում գործում է «ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը: Առաջարկվում է հաշվարկները կատարել «ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերից» ելնելով, միաժամանակ ընդգրկելով թրթռման(վիբրացիայի) հաշվարկները: Հաշվարկներում անհրաժեշտ է նաև ներառել պայթեցման ժամանակ առաջացող աղմուկը և թրթռումը(վիբրացիան):

22. Նախագծի 98-րդ էջում (16.1 կետ) հաշվարկները կատարված են 3 հերթափոխով աշխատանքների համար, իսկ 81-րդ էջում՝ 1 հերթափոխի համար: 105-րդ էջում նշվում է, որ արտադրությունը աշխատելու է նաև գիշերային ժամերին: Անհրաժեշտ է հստակեցնել, թե աշխատանքների յուրաքանչյուր տեսակը քանի հերթափոխով է իրականացվելու և հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (արտանետումներ, աղմուկ և այլն) հաշվարկելիս դրանք հաշվի առնել:

23. Նախագծի 86-րդ էջում նշվում է պոչամբարի, հարստացուցիչ ֆաբրիկայի մասին, ինչը անհասկանալի է, քանի որ նախագծում նշվում է, որ դրանք չեն նախատեսվում:

24. Նախագծի էջ 81-108 էջերում (գլուխ 15 և 16) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը և շրջակա միջավայրի վրա բեռնվածության համալիր գնահատականը անհրաժեշտ է լրամշակել՝ հաշվի առնելով մթնոլորտի աղտոտվածությունը պայթեցման աշխատանքների ժամանակ, ինչպես նաև կեղտաջրերի քանակությունը՝ ի նկատի ունենալով, որ մարզում որևէ կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան չկա, իսկ հանքավայրում անհրաժեշտ է ավելացնել սանիտարակենցաղուկների, հանգստի և սննդի ընդունման կառույցների հետ կապված կեղտաջրերի, արտանետումների և արտահոսքերի հետ կապված հաշվարկներ: Միաժամանակ՝ 102-104-րդ էջերում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը և շրջակա միջավայրի վրա բեռնվածության համալիր

գնահատականը տալիս անհրաժեշտ է հաշվի առնել գետերի ջրից օգտվող համայքների կողմից ջրօգտագործման տեսակները՝ ոռոգման, և այլն:

25. Նախագծի 101-րդ էջերում բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը ածխածնի օքսիդի, ծծմբի երկօքսիդի համար հաշվարկված չէ, իսկ փոշու համար ներկայացված է միայն հաշվարկի արդյունքը: Առաջարկվում է 100-րդ էջում հստակեցնել «R-ռիսկի/դեպք/մարդ» արտահայտությունը:

26. Նախագծի 107-րդ էջում առաջարկվում է հստակեցնել «հիգիենիկ ազդեցության գործակից» արտահայտությունը:

27. Նախագծի էջ 108-ում՝ անհրաժեշտ է ավելացնել այն նորմատիվ հիմքերը, ըստ որի պետք է իրականացվի բնապահպանական պլանը և մոնիտորինգի ծրագիրը:

28. Աշխատանքային նախագծում առաջարկվում է ներառել նոր բաժին՝ «Աշխատողների առողջության պահպանմանը ներկայացվող պահանջները», որում ընդգրկել հետևյալ կետերը՝ հետևյալ խմբագրությամբ.

1) «Հանքավայրի արդյունահանման աշխատանքների կատարման ժամանակ պահպանվում են առաջացող վնասակար և վտանգավոր գործոնների՝ աղմուկի, թրթռման սահմանային թույլատրելի մակարդակների և փոշու ու քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջները»:

2) «Աշխատողներն ապահովվում են անհատական պաշտպանության միջոցներով՝ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1631-Ն որոշման պահանջներին համապատասխան»:

3) «Աշխատողներն ենթարկվում են նախնական և պարբերական պարտադիր բժշկական զննության՝ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի «Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանն ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս)

և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը, գործոնների ծավալի, բժշկական հակացուցումների ցանկերը և աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագրման կարգը հաստատելու մասին» N 1089-Ն որոշմամբ սահմանված կարգով»:

4) «Արտադրական դժբախտ դեպքերի կանխարգելման նպատակով ապահովվում են մեքենաների և մեխանիզմների անվտանգ շահագործման պահանջները»:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կառավրդիտեր՝ ՀՀ .Լ. «ՀՎԿԱԿ» ՊՈՍԷ
Արդա Պետիկան, հեռ. 010 340-444
ՀՀ ԱՆ աշխատակազմի ԱՊՏ,
Արմենուի Առուտ ամյան,
հեռ. հեռ. 650305 (115)